

Վայելուչ էր նախապատուութիւն քաղաքին Անտիոքայ՝ յաւուրց յաջորդացն Աղեքսանդրի՝ առաջին ամենայն քաղաքաց Ասիոյ համարելոյ, աթոռ գոլով հօգօր թագաւորութեանն Սելեւկիացոց, եւ ՚ի նոյն բարձրութիւն առաւել եւս հաստատեալ ՚ի Հռովմայեցոց՝ համարեցաւ երկրորդ քաղաքս ՚ի մեծի ինքնակալութեան իւրեանց, նոյնպէս ապա եւ ՚ի Բիւզանդացոց, մինչեւ կորգեցին ՚ի սոցանէ Արաբացիք. յորոց՝ կրկին թափեալ արեւելեան կայսերաց՝ ՚ի կէս Ժ դարու, առաքէին անդր կուսակալ մեծ՝ Դքսութեան պատուոյ կոչմամբ. յայն պատիւ հասին եւ ոմանք ՚ի մերոց համագգեաց, որպէս **Խաչատուր**՝ առ դժբաղդն Դիոգին-Ռոմանոս կայսերք, (1068-74), եւ յետ սակաւուց ժպիրին **Փիլարտոս**, որ իբր ՚ի վրէժ մերժման Ռոմանոսի ՚ի գահէն՝ յափշտակեաց զիշխանութիւնն Անտիոքայ, եւ առ ՚ի կալ հաստատուն՝ յարեցաւ յայլադէնսն. ընդ որ խոժոռեալ որդւոյ իւրոյ՝ մատնեաց զքաղաքն ՚ի ձեռս Սիւլէյմանի՝ սուլտանին Իկոնիոյ. եւ ՚ի սմանէ կորգեաց բռնագոյնն՝ Դուրուշ, կարգեալ անդ վերակացու ընդ ձեռամբ: *Ախուսիան* անուն ոմն էր կողմնակալ Անտիոքայ՝ ՚ի գալստեան եւ յանցս Ա Խաչակրաց՝ ընդ երկիր լեռնական պարոնայց մերոց, եւ ՚ի դիմելն յայս կոյս, եւ պաշարել զքաղաքն զամիսս տասն, եւ առնուլ յՅ յունիսի 1098 ամին, առ պայազատութեամբ Կոստանդնի որդւոյ Ա Ռուբինի. եւ զի բազում արութիւն քաջութեան եցոյց ՚ի մարտս՝ ՚ի ժամանակի պաշարման քաղաքին՝ *Պեմունդ*³⁷ զօրավար, որդի Ռոպերդի Կիսգարտայ իշխանին Բուլիոյ, նմա ետուն զիշխանութիւն Անտիոքայ. որ եւ հանդերձ ամենայն յաջորդօքն՝ զնոյն պատուոյ անուն պահեաց, Prince ըստ Փռանկաց, զոր մերքս փոխեցին ՚ի *Բրինձ*, եւ սեփականեցին տերանց այսմ իշխանութեան. վասն որոյ եւ մեք նոյնպէս կոչեմք ՚ի պատմութեանս: Առ ժառանգաւ սորին եւ որդւով (*Պեմունդ Բ*) մինչ տղայն էր, իբրեւ տեղապահք յանձանձէին զպետութիւնն՝ այրաքաջն Տանգրի եւ այլք. եւ զի ոչ եթող նա զաւակ արու, *Ռեմունդ*՝ ՚ի տոհմէ իշխանաց Բուադիէի փեսայացեալ ՚ի դուստր նորա *Կոստանդիա*՝ եղեւ Բրինձ, եւ ՚ի զարմ իւր փոխեցաւ իշխանութիւնն մինչեւ ՚ի վախճան: Եւ քանզի Տանգրի եւ ընկերք իւր՝ մինչ չեւ էր իջեալ Ռուբինեանց ՚ի Տաւրոսական լեռանց անտի ՚ի Դաշտայինն Կիլիկիա, գրաւեալ էին զքաղաքս սորին, եւ յետ թափելոյ Յովհ. Կոմ-

³⁷ Յատուկ անուն նորա յաւագանէն՝ էր Մարկոս, իսկ Պեմունդ կամ ըստ Փռանկաց *Բոեմունտ*, Bohémond, կոչեաց զնա հայր իւր՝ վասն անհեղեղ հարստութեան հասակին, զի յայն անուն հոչակէր ՚ի վէպս նոցա հսկայ ոմն. անուն՝ ոչ հեռի յեբրայական *Բեհմուլթ*: